ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը
2015-2016 ուսումնական տարվա ավարտի կապակցությամբ

Սիրելի՛ շրջանավարտներ, ուսուցիչներ, ծնողներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ դպրոցական ուսումնական տարվա ավարտի կապակցությամբ:

Տոնական այս օրը գեղեցիկ ավանդույթ է ձեւավորվել: Կրթօջախներում վերջին դասի հետ հնչում է վերջին զանգը, որի ղողանջները ուղեկցելու են ձեզ ողջ կյանքի ընթացքում՝ հաճելի հիշողություններ պարգեւելով աշակերտական անհոգ ու մտերմիկ կյանքի, դասընկերների, սիրելի ուսուցիչների մասին:

Բնական է այն հուզմունքը, որով համակված՝ դուք հրաժեշտ եք տալիս հարազատ դպրոցին, ուսուցիչներին եւ համադասարանցիներին: Դուք ավարտում եք ձեր կյանքի կարեւոր փուլերից մեկը եւ մուտք եք գործում պատասխանատու մի շրջան:

Վստահ եմ, որ ձեր երազանքներին հասնելու համար դուք ունեք բավարար գիտելիքներ, կամք եւ բարոյական բարձր հատկանիշներ: Այդուհանդերձ, հաստատակամորեն կքայլեք մեծ կյանքի ճանապարհով, կլինեք պետության արժանավոր քաղաքացիներ եւ ձեր նպաստը կբերեք մեր պետության հետագա զարգացմանը:

Բարի երթ ձեզ, սիրելի՛ շրջանավարտներ, մեծագույն հաջողություններ ձեր բոլոր հետագա ձեռնարկումներում: